և չհակառակիլ այլ եւս վասն այնր, և ամենայն ազգ բը-
նակեսցի 'ի սահմանեալ տեղիս, ըստ սովորութեան իւր-
եանց առանց հակառակութեան և խռովութեան։ Յորժամ
հասանիցէ հրովարտակս առ բարձրագոյն տեսանն ձեր,
հաստատեցէք զեպիսկոպոսն զայն և զազգն նորա 'ի Գողգ-
ոթայն և 'ի պահարանն, բնակիլ անդ ըստ վաղեմի սո-
վորութեան իւրեանց, և գրեսջիք 'ի վերայ ազգին Վրաց
գիր դատակնքոյ։ որպէս գրեցի 'ի հրովարտակիս յայսմիկ,
և կատարեալ արգելուլ զնոսա 'ի հակառակութենէ Հայոց։
Յանձն առնեմ զնոսա ձեզ եւ զմուտս նոցա 'ի տեղիսն
յայնոսիկ։ զի արժանի եղեւ մեծ Եպիսկոպոսն այն շնոր-
հաց և ողորմութեանս այսմիկ։ 'ի դառնալ և 'ի հասանիլ
խաղաղութեամբ 'ի տեղի իւր պատուական խիլայիս, թէ
վասն այսր և թէ վասն այլոյ իրիք։ ըստ սովորութեան,
որպէս գրեցաք յառաջագոյն, և զոր ինչ միանգամ սահ-
մանեալ եմ 'ի հրովարտակիս։ Գրեալ 'ի ԼԷ Ըէմէպ ամ-
սոյ՝ Ա•• (1436)։

Ընկալաւ կուսակալն զբանս թագաւորին, եւ խոնարհեալ հնազանդեցաւ ամենայն հրամանաց նորին, և յանձն առ յանձնել զԳողգոթայն եւ զպահարանն Արք եպիսկոպոսին Մարտիրոսի և ազգի նորա։ Ապա եւ կոչել զազգն Վրաց գրել յետակար 'ի վերայ նոցա՝ ըստ բանի հրովարտակին։ Եկին և յանդիման եղեն յատենի անդ տեսուչն Վրաց Աթաբեկ որդի Թագայի որդւոյ Զէվոէկի, Զաքարի՝ որդի Գէորգայ որդւոյ Ղազարի։ Մխրեղու որդի Սատանի որդւոյ Բեամբի, յազգէ Վրաց։ և խոստովան եղեն յատենի անդ հաճութեամբ և հաւանութեամբ իւրեանց։ որք էին 'ի կենդանութեան և 'ի խաղաղութեան, և տեսն։ 'ի սոյն թուականէս սկսեալ այսուհետեւ չունիմք հակառակութիւն վասն Գողգոթային այնմիկ և պահարանաց նորին, ոչ մեք և ոչ ոք յազգէն մերմէ։ և չունիմք այսուհետեւ ոչ ընդ եպիսկոպոսին և ոչ ընդ ազգին Հայոց։ ոչ վէճ, ոչ կռիւ, ոչ տուելութիւն, ոչ թշնամութիւն, ոչ դատ և ոչ դատաստան։ Եւ այսպիսի եղանակաւ կատարելապէս 'ի բաց կացին, օրինօք և դատաստանաւ արդեւլին զինքեանս 'ի Գողգոթայէ և 'ի պահարանացն, չվիճել և չհակառակիլ յամենայի վասն այնր, որ և իցէ առթիւ։